ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«01» հոկտեմբերի 2019 թվականի N 227

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Ձեզ է ներկայացվում 2019 թվականի սեպտեմբեր ամսին Հացիկ համայնքի ղեկավարի կողմից արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները: Նշված ժամանակահատվածում ընդունվել է 3 որոշում, կարգադրություն չի արձակվել:

Առդիր 4 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

01.10.2019թ.
գ. Հացիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«24» սեպտեմբերի 2019 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 68

## ՀՈՂԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝

Որոշում եմ

1. ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքում գտնվող Ասատուր Պետրոսի Բադուրյանին՝ ծնվ. 07.11.1960թ., Մարինե Ասատուրի Բադուրյանին՝ ծնվ. 13.05.1989թ., Արմինե Ասատուրի Բադուրյանին՝ ծնվ. 09.09.1987թ. և Անահիտ Մովսեսի Խամիսյանին՝ ծնվ. 20.12.1966թ. սեփականության իրավունքով պատկանող 04-058-152-005 ծածկագրով 0.2615 հա խաղողի այգուց 15ք.մ հողամասը տրամադրել անհատույց սեփականության իրավունքով: Հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ 24.09.2019թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«03» սեպտեմբերի 2019 թվականի

## ՈՐՈՇՈՒՄ N 67

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ –ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՍՊՐԱՄ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակչուհի Ասպրամ Աշոտի Սողոմոնյանը դիմել է Արմավիրի մարզ գյուղ Հացիկ 15-րդ փողոց 83 հասցեում գտնվող օրինական տնամերձ հողամասի նկատմամբ իրավունքների վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2;3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով. հիմք ընդունելով Ասպրամ Սողոմոնյանի դիմումը

Որոշում եմ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Հացիկ գյուղի 15-րդ փողոց 83 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Ասպրամ Սողոմոնյանի (ծնված 01.07.1936 թվականին) իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.09 հա օրինական տնամերձ հողամասի նկատմամբ:
2. 04-058-036-040 ծածկագրով 0.09 հա հողամասին կից 0.018հա ավել տարածքը, որը չի գերազանցում տնամերձ հողամասի 20%-ը, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, սեփականության իրավունքով. հատկացնել անհատույց Ասպրամ Սողոմոնյանին:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքում համայնքային սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 15-րդ փողոց 83 հասցեում գտնվող Ասպրամ Սողոմոնյանի տնամերձ հողամասին կից 0.0213 հա բնակավայրի նշանակության տնամերձ հողամասը նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի կարգով վաճառել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Ասպրամ Սողոմոնյանին, քանի որ նա 1991 թվականից սկսած օգտագործել և բարեխղճորեն վճարել է իր տնամերձ հողամասից ավել 0.0213 հա հողամասի հարկերը:

4. Վաճառվող հողամասի արժեքն է` (213x222)x30%=14186 ՀՀ դրամ

ա) 0.0213 հա բնակավայրի նպատակային նշանակության բնակելի տան կառուցապատման բնակավայրի հողատեսքի համար 14186.0 ՀՀ դրամ:

5. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. մարզերի միավորված ստորաբաժանմանը կատարել վերը նշված հողամասի նկատմամբ քաղաքացի Ասպրամ Աշոտի Սողոմոնյանի (ծնված 01.07.1936 թվականին) սեփականության իրավունքի պետական գրանցում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 4-րդ կետով սահմանված գումարը վճարելու պահից, սակայն ոչ ուշ այն ընդունելուց 15 օրվա ընթացքում

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ

03.09.2019թ.